ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-21/69-2

ք. Երևան «07» հոկտեմբեր 2021թ.

Արտակարգ իրավիճակների նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Վ.Օհանյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Է. Հովսեփյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

2.4.11 Պայմանագիրը կատարել թվով ---աշխատակիցների միջոցով և պայմանագիրը կատարելու ժամանակ, պայմանագրի գնի ավելի քան 50 տոկոսը՝ հանրագումարային ձևով, ուղղել հայաստանյան ծագում ունեցող աշխատանքային և (կամ) արտադրական ռեսուրսների օգտագործման միջոցով պայմանագրի կատարմանը,

2.4.12 Պայմանագրի կատարման շրջանակում յուրաքանչյուր փուլի հանձնման-ընդունման արձանագրության հետ մեկտեղ պատվիրատուին ներկայացնել տվյալ փուլի կատարումն ապահովելու նպատակով օգտագործված հայաստանյան ծագում ունեցող արտադրական ռեսուրսների ծագման երկրի սերտիֆիկատների և ռեսուրսների ձեռքբերման հաշիվ-ապրանքագրերի, ինչպես նաև իր կողմից հաստատված

տեղեկանքի պատճենները՝ համապատասխան թվով աշխատողներին վճարված գումարների մասին, նշելով ըստ աշխատողների վճարված գումարների չափերը և վերջիններիս հանրային ծառայության համարանիշները:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 4 320 000 (չորս միլիոն երեք հարյուր քսան հազար) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.7 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել

ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.10 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.11 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.12 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.13 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Արտաքին իրավիճակների նախարարություն	«ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ
ք.Երևան, Դավիթաշեն 4,Ա.Միկոյան փող. 109/8	ք.Երևան, Դրոյի 8/4 գործ. Ք.Երևան, Զավարյան 57/1
Հ.Հ ՖՆ գանձապետական վարչություն	Բանկ Յունիբանկ ՓԲԸ, Մալաթիա մ/ճ
հ/հ 900011001352	հ/հ24105020675400
ՀՎՀՀ 00153247	ՀՎՀՀ 00889965
Գլխավոր քարտուղար	Տնօրեն՝
_____Վ. Օհանյան	_____Է. Հովսեփյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված
« » 2021թ. կնքված
ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-21/69-2 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի											
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը **	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
									հասցեն	ենթակա քանակը	ժամկետը***
2	*35811180/7*	*Տոնական համազգեստ կիտել-տաբատ*	«ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ	Տես Հավելված 1.1	*լրակազմ*	60 000	4 320 000	72	ք.Երևան Շիրակի 3-րդ նրբ. N6	72	2021թ օգոստոսի 31

** Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

ԳՆՈՐԴ

Արտակարգ իրավիճակների նախարարություն
ք. Երևան,Դավիթաշեն 4,Ա.Միկոյան փող. 109/8
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011001352
ՀՎՀՀ 00153247
Գլխավոր քարտուղար՝

Վ. Օհանյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

«ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ
ք.Երևան, Դրոյի 8/4 գործ. Ք.Երևան, Զավարյան 57/1
Բանկ Յունիբանկ ՓԲԸ, Մալաթիա մ/ճ
Հ/Հ24105020675400
ՀՎՀՀ 00889965
Տնօրեն՝

Է. Հովսեփյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1.1
« » 2021թ. կնքված
ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-21/69-2 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

1. **Տոնական համազգեստի լրակազմ՝** բաղկացած է կոստյումից (կիտել, տաբատ), գոտուց, փողկապից, գլխարկից և վերնաշապիկից (Նկար 1):

Կոստյումը և գլխարկը, արտադրվում են ՏՄ 858-5300-2005 տեխնիկական պայմանին համապատասխանող մուգ փիրուզագույն՝ առնվազն 260գրամ/մ² մակերեսային խտությամբ կիսաբրդյա գործվածքից՝ 60+/-2% բուրդ, 40+/-2% պոլիէսթեր բաղադրությամբ: Աստառը՝ վիսկոզայի՝ առնվազն 100գրամ/մ² մակերեսային խտությամբ, մուգ կապույտ գործվածքից:

Կոստյումի կիտելը. կիտելը կազմված է կենտրոնական կոճկվող լանջափեշերից, մեջքից, օձիքից, դարձածալերից և թևքերից:

Լանջափեշերը կոճկվում են երեք 22մմ տրամագծով ոսկեգույն կոճակներով՝ ալյումինե համաձուլվածքից, արտաքին երեսամասը՝ ուռուցիկ, ՀՀ զինանշանի դաջվածքով, հակառակ մասում կիտելին ամրացման ականջակով, տեղադրված են միաշարք: Կիտելը առաջամասից կրկնակարվում է սոսնձվող կտորով, իսկ կրծքամասում՝ սոսնձվող կտորով և վուշ-բրդյա քաթանով: Առանձին դետալները՝ /գրպանների կափույներ, օձիք/ կրկնակարվում են սոսնձվող կտորով և վուշ-բրդյա քաթանով: Թևքերը՝ երկու կտորից, որոնք թեզանիքի մասում /10սմ բարձրությամբ/ միացվում են կարմիր եզրաքուղով: Թևերը՝ ներկարված, օձիքը՝ ծալովի, կարմիր եզրաքուղով, օձիքի միացման կարում մշակված է կախիչ: Օձիքի վրա ամրացվում է մետաղական ՀՀ ԱԻՆ խորհրդանշանը՝ ստորին հատվածում դափնեճյուղերով եզրափակված /Նկար 3/: Երկու լանջափեշերի ներքևի մասերում ուղիղ կափույրով /16սմ/ ներկարված գրպաններ: Աջ թևքին՝ ուսագլխից 8սմ ներքև, ասեղնագործված է <<ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՊԱՐԱՏ>> կամ ստորաբաժանման ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ հայերենով և անգլերենով, ներքևում՝ ՓԾ թևքի տարբերանշանը, ձախ թևքին՝ ուսամասից 3 սմ ներքև՝ ՀՀ եռագույնը կիսակլոր, ներքևում գրված «ՀԱՅԱՍՏԱՆ», որից 1 սմ ներքև ասեղնագործված է ՀՀ ԱԻՆ խորհրդանշանը: Հետևամասում՝ բացվածքով: Աջ և ձախ լանջափեշերին ներսի մասից մշակվում են կտրվածքով ծոցագրպաններ:

Կիտելի վերևից երկրորդ կոճակի վրա պետք է կախված լինի պիտակ՝ վրան նշված տեսականու անվանումը, տեխնիկական

պայմանի համարը, չափսը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը, ներսի կողմից

կարվում է արտադրանքի չափս-հասակի ստուգիչ պիտակ:

Կիտելի ուսադիրը՝ կարովի, տոնական, ոսկեգույն ասեղնագործված: Ուսադիրների վերին հատվածն ամրացված է Հայաստանի

Հանրապետության զինանշանի պատկերով՝ 12 մմ տրամագծով մեկական կոճակով:

Ավագ սպայական կազմի ուսադիրների վրայով անցնում են կարմիր, 4մմ լայնքով երկու ժապավեն՝ ուսադիրի երկարությամբ,

որոնք մշակված են կողային եզրերից դեպի ներս՝ համապատասխանաբար 1,2սմ հեռավորության վրա:

Կրտսեր սպայական կազմի ուսադիրների մեջտեղով անցնում է կարմիր, 4մմ լայնքով ժապավեն՝ ուսադիրի երկարությամբ:

Կոստյումի տաբատը՝ ուղիղ ուրվագծով, կազմված առաջամասից, հետևամասից և գոտուց: Առաջամասի 2 կողային գրպանները թեք են, ներկարված, տեղադրված եզրաքուղից առաջ: Առաջամասում մինչև ծնկները մշակվում է աստառով: Կողային կարերում անցկացվում է 2մմ լայնության կարմիր մահուդից երիզներ: Հետևամասի աջ կողմում՝ կոճակով կոճկվող եռանկյունաձև կափույրով ներկարված գրպան: Գոտին՝ գոտեփոկի անցկացման կամրջակներով, կամրջակներից մեկը պետք է գտնվի գոտկատեղի հետնամասի միացման կարի վրա: Գուլֆիկը մշակվում է շղթայով, որը գոտու մասում կոճկվում է մետաղյա կեռիկով և մեկ կոճակով:

Կոստյումի փաթեթավորումը՝ եռաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղի մեջ՝ 10 լրակազմ, տեսականին՝ պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1 լրակազմ: Արկղերի չափսերը պետք է համապատասխանեն կոստյումի չափսերին, որպեսզի կոստյումը չճմրթվի: Արկղերը՝ պիտակավորված, վրան նշված տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, տեխնիկական պայմանի համարը, արտադրման ամիսն ու տարեթիվը:

Գոտին՝ արտադրվում է 5+/-0.5սմ լայնությամբ և 3-4մմ հաստության ոսկեգույն տիսմայից, ԱԻՆ տարբերանշանի պատկեր ունեցող էլիպսաձև 40x50մմ չափսի մետաղյա, ոսկեգույն ճարմանդով, մյուս ծայրին՝ ամրակալով (Նկար 4): Գոտին՝ ամրակալի կողմից կարերով ֆիքսված, իսկ ճարմանդը՝ երկարությունը կարգավորող մակօղակով: Գոտու ճարմանդի ամրացման ծայրում, ներսի կողմից պետք է ունենա կպչուն ժապավեն՝ 40 սմ երկարությամբ և 4 սմ լայնքով: Չափսերը պատվիրատուի կողմից կտրամադրվեն մատակարարումից առնվազը մեկ ամիս առաջ:

Փաթեթավորումը՝ գործարանային, ստվարաթղթե արկղերով: Արկղերը՝ պիտակավորված, պիտակի վրա նշված անավնումը, քանակը, մատակարար կազմակերպության անունը, արտադրման տարեթիվը:

Փողկապ՝ ГОСТ-28847-90-համապատասխան, մուգ փիրուզագույն պոլիէթերային գործվածքից, ձգված սեղանակերպ ուրվագծով ձևածքից: Ավարտվում է ներքնամասում սուր անկյունով, ներքևի լայնությունը՝ 8±0.4սմ: Վերնամասը՝ մշտական հանգույցով, վերին մասի 5.5-6սմ լայնությամբ, բարձրությունը՝ 4-4.5սմ: Հանգույցի ներքևի եզրից 8սմ հեռավորության վրա գունավոր ասեղնագործվում է ՀՀ զինանշանը՝ 3 սմ բարձրությամբ և 3.3սմ լայնությամբ: Փողկապի ներքևի աջ բութ անկյունից 2սմ ներքև և 2սմ դեպի ներս զուգահեռ ձախ կողմին, ասեղնագործվում է <<ՀԱՅԱՍՏԱՆ>>, տառի բարձրությունը՝ 8մմ: Փողկապն օձիքի տակ ամրացվում է կրկնակի ծալված էլաստիկ ժապավենով, չափսի կարգավորման մետաղական ամրակով: Փողկապի երկարությունը՝ համաձայն համազգեստի չափսերի:

Փաթեթավորումը՝ ստվարաթղթե, պիտակավորված արկղերով, արկղի մեջ՝ 25 հատ: Պիտակի վրա նշված տեսականու անվանումը, քանակը, չափսը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը, տեխնիկական պայմանի համարը:

Գլխարկ՝ Գլխարկը կազմված է ճակատամասից, գլխարկահատակից, լաքապատ հովհարից, կարգավորվող արհեստական կաշվից, ճակատափոկից և գլխարկաբոլորքից, որի վրա ոսկեգույն կոճակով ամրացվում է զարդապարան: Առջևի կենտրոնական մասում ամրացված է 80x54մմ կոկարդ՝ ՀՀ ԱԻՆ խորհրդանշանով / Նկար 2/: Գլխարկահատակի և գլխարկաբոլորքի վերին եզրով անցնում է 2մմ լայնքով կարմիր մահուդից երիզ: Ներսից գլխարկահատակի եզրագծով տեղադրվում է համապատասխան չափսի զսպանակատիպ մետաղյա ժապավեն: Գլխարկաբոլորքի գործվածքը՝ մուգ փիրուզագույն մահուդից, էլեկտրոստվարաթղթե ներդիրով և 3.5 սմ լայնքով արհեստական կաշվե շրջանակով: Հովհարը հավաքովի է, սև գույնի, արտաքինից լաքապատ, իսկ ներսամասը՝ բարխաթե կտորից: Գլխարկը ներսից պատված է 8-С5-ВШ

արտիոկլի մուգ փիրուզագույն աստառով: Գլխարկագագաթի բարձրությունը գլխարկաբոլորքի վերին եզրից 8.5-9սմ՝ կախված գլխարկի չափսերից: Գլխարկաբոլորքի բարձրությունը՝ 4.8-5.2 սմ: Սկսած 52 չափսի գլխարկից՝ գլխարկահատակի տրամագիծը պետք է լինի 29.5 սմ, հաջորդաբար յուրաքանչյուր չափսին ավելանում է 3մմ: Գլխարկաբոլորքի ճակատափոկի ամրացման ոսկեգույն 14մմ կոճակները այլումինե համաձուլվածքից են՝ ՀՀ զինանշանի պատկերով: Գլխարկահատակի վրա ներսի կողմից կարվում է 10սմ երկարության և 6սմ լայնության չափսերից ոչ պակաս, արհեստական կաշվից պիտակ, որի վրա նշվում է արտադրող կազմակերպության անվանումը և գլխարկի չափսը: Փաթեթավորումը՝ եռաշերտ ծալքավոր ստվարաթղթե արկղերով, 1 արկղի մեջ՝ 20 հատ: Արկղերը՝ պիտակավորված, վրան նշված արտադրանքի անվանումը, արտադրող կազմակերպության անվանումը, քանակը, չափսերը, արտադրման ամիսն ու տարեթիվը և տեխնիկական պայմանի համարը:

Վերնաշապիկ՝ ТУ 858-5790-2005 տեխնիկական պայմանին համապատասխան, 67+/-2% վիսկոզա, 65+/-2% պոլիեսթեր բաղադրությամբ սպիտակ գործվածքից: Վերնաշապիկը բաղկացած է լանջափեշերից, մեջքից, օձիքից և թևերից: Լանջափեշերը կենտրոնական 8 կոճակ՝ օղակով կոճկվող, վերին կենտրոնական ուղղահայաց ծալվացքով և կափույրով, վրադիր գրպաններով: Կոճակները՝ պլաստիկ, գույնը՝ սպիտակ: Մեջքը՝ կոկետկայով, ուղիղ գոտիով, կողամասերը՝ էլաստիկ ժապավենով ձգված: Օձիքը՝ ծալովի, թևերը՝ ներկարված, բազկակալներով և կոճկվող բացվածքներով: Օձիքի անկյուններում ներսից տեղադրված են պլաստիկ ներդիրներ: Ուսադիրների ամրացման համար ուսակարերի շրջանում՝ 2 կամրջակներ և 3 փակօղակներ: Գրպանների կափույրների և բազկակալների կոճակները 14մմ, մնացածը՝ 11մմ, 2 անցքով: Օձիքի ներսի կողմից կարվում է արտադրանքի չափս-հասակի ստուգիչ պիտակ: Վերնաշապիկի վերևից 2-րդ կոճակի վրա պետք է կախված լինի պիտակ՝ վրան նշված տեսականու անվանումը, չափսը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը և տեխնիկական պայմանի համարը:

Վերնաշապիկի ուսադիրը հանովի՝ տոնական, սպիտակ գույնի, հակադարձ կողմի ներքին եզրից ուսադիրի երկարությամբ ամրացման լեզվակով, որի վերջնամասում՝ եզրից 5 մմ դեպի ներս, արվում է կտրվածքով 5 մմ տրամագծով անցք՝ ուսադիրի ամրացման համար: Ամրացման լեզվակի լայնությունը՝ 2.5 սմ: Ուսադիրի հակադարձ կողմից, ներքին եզրից դեպի ներս՝ 3.5 սմ հեռավորության վրա, ուսադիրի լայնությամբ մշակված է 2 սմ լայնքով կամրջակ, որի միջով անցնում է ուսադիրի ամրացման լեզվակը: Ամրացման լեզվակը և կամրջակը պետք է լինեն պատրաստված սպիտակ արհեստական կաշվից: Ուսադիրների վերին հատվածն ամրացված է Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով՝ 12 մմ տրամագծով մեկական կոճակով: Ուսադիրների վրա տեղադրված են հնգաթև ուռուցիկ աստղեր՝ կոչմանը համապատասխան:

Ավագ սպայական կազմի ուսադիրների վրայով անցնում են կարմիր, 4մմ լայնքով երկու ժապավեն՝ ուսադիրի երկարությամբ, որոնք մշակված են կողային եզրերից դեպի ներս՝ համապատասխանաբար 1,2սմ հեռավորության վրա: Ուսադիրների վրա տեղադրված են ոսկեգույն հնգաթև ուռուցիկ աստղեր (20մմ)՝ կոչմանը համապատասխան: **Կրտսեր սպայական կազմի** ուսադիրների մեջտեղով անցնում է կարմիր, 4մմ լայնքով ժապավեն՝ ուսադիրի երկարությամբ: Ուսադիրների վրա տեղադրված են ոսկեգույն հնգաթև ուռուցիկ աստղեր (13մմ)՝ կոչմանը համապատասխան:

Աստղերը՝ ալյումինե համաձուլվածքից, հարթանիստ, բուրգաձև, 5 թևերից, տրամագիծը՝ 13 և 20մմ:

Ուսադիրների քանակներն ըստ կոչումների կտրամադրվեն պատասխանատու ստորաբաժանման կողմից՝ մատակարարումից առնվազն մեկ ամիս առաջ:

Հավելված N 1
« » 2021թ. կնքված
ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-21/69-2 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի														
			դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**											
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
2	*35811180/7*	*Տոնական համազգեստ կիտել-տաբատ*	-	-	-	-	-	-	3 240 000	3 240 000	3 240 000	4 320 000	4 320 000	4 320 000	4 320 000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ԳՆՈՐԴ

Արտակարգ իրավիճակների նախարարություն
ք. Երևան,Դավիթաշեն 4,Ա.Միկոյան փող. 109/8
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011001352
ՀՎՀՀ 00153247
Գլխավոր քարտուղար՝

_____Վ. Օհանյան
(ստորագրություն)

ՎԱՃԱՌՈՂ

«ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ
ք.Երևան, Դրոյի 8/4 գործ. Ք.Երևան, Զավարյան 57/1
Բանկ Յունիբանկ ՓԲԸ, Մալաթիա մ/ճ
Հ/Հ224105020675400
ՀՎՀՀ 00889965
Տնօրեն՝

_____Է. Հովսեփյան
(ստորագրություն)
M.S.

Հավելված N 3
« » 2021թ. կնքված
ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-21/69-2 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« »« » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____»«_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 2021թ. կնքված
ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-21/69-2 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն